

որ թելադրէ թէ իշխանութեան և երկարատե տառապանքի իրարու միացած նոյն տարրերը նոյնչափ անհրաժեշտ հարկ չեն այսօր մեր իւրաքանչիւրին առտնին իշխանութեան շրջանակին մէջ: Եթէ մարդիկ իրենց չափահասութեան ժամանակ կը մոլորին և կ'արհամարհեն իշխանութիւնը և զԱստուած, և կ'աշխատին թուլցնել քաղաքային և ընկերական պարտականութեան կապերը, այդ կը նշանակէ թէ մեծնալով գործնական աշխարհը մտնելէ առաջ, փոխանակ ծնողական իշխանութեան հըռհպատակ ըլլալու, ազատ թողուեցան իրենց քմաց համաձայն շարժելու: Եւ այս է ճշդիւ ընկերային թէ՛ բարձր և թէ՛ խոնարհ շրջանակներուն պատկանող տղայոց ընդհանուր պատկերը: Անոնք իրենց ուզածը կ'ընեն:

Անհրաժեշտ չէ մերժել ցաւալի կերպով շարաշար գործածուած սա առածը. «Լաւ է սիրով կառավարել քան երկիւղով»: Անտարակոյս լաւ է որ տղայք սիրով կառավարուին քան երկիւղով, պայմանաւ որ կառավարողն սակայն այս պայմանը չենք կրնար զոհել: Տղայ «կառավարել» ըսելը չնշանակեր անոր բան մը պատուիրել և, եթէ առարկէ, տրուած պատուէրին բանաւորութիւնը անոր բացատրել: Ոչ ալ կը նշանակէ անոր գործ մը յանձնել և, եթէ չընդունի, վարձու խոստումով զայն հաճեցնել: Հոգ տանելու է կանուխ հասկցնել անոր թէ բանաւորութիւն ըսուած բան մը կայ, և թէ իր հօրը և մօրը պատուէրներն իսկ վայելչութեան յաւիտենական հիմ մը ունին: Սակայն երբ այդ ուղղութեամբ կատարուած է ամէն ինչ որ հնար է կատարել տղուն սահմանափակ հասկողութիւնն ինկատ առնելով, անոր կը թուութեան էական մէկ տարրը տակաւին պակաս կը մնայ եթէ շատ մը հրամաններ և գործեր չտրուին անոր՝ առանց ամենադոյզն բացատրութեան, և եթէ չվարժեցուի գործեր ընել լոկ և բացարձակապէս սա պատճառաւ որ իրեն յանձնուած են անոնք:

Տղուն բարոյական դաստիարակութիւնն սկսած չըսուիր մինչև որ ան չձգէ իր կամքը: Այդ է կորիզը որուն շուրջ բիւրեղանալու են տեականապէս ընտիր նկարագրի մը բոլոր տարրերը: Բաղդատապէս շատ քիչ անգամ կարելի կ'ըլլայ այս արդիւնքը ձեռք բերել առանց չափով մը խստութիւն ի գործ դնելու: Շատ հաւանական է որ տղուն ծեծ քաջուի և ստուգիւ անոր զգացումները շատ անգամ վիրաւորուին մինչև որ սորվի հնազանդութեան արուեստը, այսինքն իրեն հրամայուած ամէն բան դիւրութեամբ ընել սա պարզ պատճառաւ որ հրամայուած է իրեն: Բայց երբ միանգամ ստանայ

այդ արուեստը, նկարագրի ամուր հիմերը կը դրուին, և ծնողաց անմուռնչ հնազանդելով կ'առաջնորդուի նոյնպէս հնազանդիլ ընկերութեան և պետութեան արդար պահանջումներուն, և երկիւղածութեամբ անսալ Աստուծոյ սուրբ կամքին՝ նոյն այն դիւրին և բնական ոճով, որով բողոքը ծաղիկ կ'ըլլայ և առաւօտը կատարեալ օր:

ՅԵՍՈՒԱՅ ԳԻՐՔԸ
[Խմբագրական]
6.

Աքարի մեղքին քառուելէն ետքը Աստուած նորէն խրախուսեց զՅեսուս՝ ինչպէս խրախուսած էր սկիզբը (Գլ. Ա. 9): Ժողովրդին ալ սարսափը անհետացաւ երբ իմացաւ թէ իր պարտութեան պատճառը, այն է Աստուծոյ սրտմտութիւնը, անցած է: Աստուած, աւելի քաջալերելու համար ժողովուրդը, Գայիի աւարն անոր տուաւ (Ը. 2), ինչպէս տուաւ նաեւ յետոյ նուաճուած բոլոր քաղաքներուն աւարը: Գայիի վրայ երկրորդ անգամ յարձակելու պահուն Յեսուս, փոխանակ միայն 3,000 մարդ զրկելու, իր հետ անաւ բոլոր պատերազմիկները: Քաղաքը ռազմագիտական ճարտարութեամբ մը ամուրեցուցաւ: Բանակին մէկ մասը զիշերայն դարանակալ եղաւ քաղաքին ետեւը և անոր վրայ յարձակեցաւ, երբ զայն պաշտպանողները ելան և հալածեցին միւս Իսրայելացիները որ փախչի կը ձեւացնէին: Քիչ մը դժուար է հասկնալ այս դարանակալութեան պատմութիւնը: Ը. 3 համարին մէջ կ'ըսուի թէ Յեսուս այդ նպատակաւ 30,000 մարդ ընտրեց, իսկ Ը. 12ի մէջ 5,000 մարդ կը յիշուին: Կը կարդանք թէ Բեթելի, որ Գայիէ միայն երկու մղոն հեռու էր և բոլոր մը պատճառաւ անկէ չէր տեսնուեր, մարդիկը Գայիի մարդոց հետ միանալով Իսրայելի ետեւէն ելան (Ը. 17): Թերեւս երկու դարանակալութիւն կար, մին Բեթելի և միւսը Գայիի դէմ, և կամ 30,000 պատերազմական մարդոց 5,000ը Գայի քաղաքն առին, և միւսները Բեթել: Ժ. 16 համարին մէջ Բեթելի թագաւորը կը յիշուի իբրև մին սպաննուածներէն, բայց Բեթելի աման յիշատակութիւն չկայ: Թերեւս Բեթել Գայիի հետ ինկաւ նոյն աւուր մէջ: Գայիի դէմ Յեսուսայ ռազմագիտական ճարտար հնարքը կատարելապէս յաջողեցաւ: Գայիի մարդիկը վստահաբար ելան Իսրայելի ետեւէն ինկան, և երբ իրենց քաղաքէն բաւական հեռացած էին, դարանակալները քաղաքը զիմեցին և զայն կրակի տուին: Այն ատեն Յեսուս վերցուց իր նիզակը, որ թերեւս դրօշաւոր էր, նշան տալու համար փախչիլ կեղծող իր մարդոց որ թշնամւոյն վրայ դառնան: Գայիի մարդիկը, Իսրայելացի դօրաց երկու բաժիններուն մէջտեղը բռնուելով, շախմատեցան: Ամէնքը սուրէ անցան, իրենց քաղաքը քարակոյտ մը եղաւ, իրենց թագաւորն սպաննուեցաւ և անոր մարմինը ծառէ մը կախուեցաւ մինչև արեւամուտի ժամանակ (Բ. Օր. Ի. Ա. 23), և ապա քարակոյտի մը ներքեւ թաղուեցաւ: Քարակոյտ մը որ հիմա պարզապէս էլ Թէլ կը կոչուի՝ կը կարծուի թէ կը ցուցնէ Գայիի տեղը: Արդի Պաղեստինու մէջ բազմաթիւ տեղեր կան Թէլ (բլուր) կոչուած, բայց այս չունի ուրիշ անուն:

Երկրին ներքին գաւառներն ահա բաց մնացին Յեսուսայ առջեւ: Նա օգուտ քաղեց Քանանացիներուն մէջ տիրող անուղղէն և Մովսեսէ հրամայուած կրօնական գործ մը կատարեց (Բ. Օր. Ի. Բ.): Բոլոր կիները և տղաքը, նաեւ բանակին հետ միացած բոլոր օտարականներն ամուրով 11 ժամու ուղեւորութիւն մը ըրաւ երկրին դէպ ի ներսը, ուղեւորութիւն մը՝ զոր պատերազմականները մէկ օրէն կրնային ընել, և որ հաւանօրէն գէթ երեք օրէն կատարուեցաւ: Ոմանք կարծած են թէ այդ ուղեւորութիւնը տեղի ունեցաւ աւելի ուշ ժամանակ երբ երկրին աման գործը լմնացած էր. սակայն տարակոյս չկայ թէ դէպքն իր տեղը պատմուած է: Ուղեւորութիւնը հաւատքի գործ էր: Յեսուս կ'ակնկալէր որ Տէրը պաշտպանէր իր ժողովուրդը, և Տէրը պաշտպանեց: Աստուծոյ նպատակը ազգի մը տեղ ուրիշ ազգ մը Պաղեստինու տէր ընել չէր լոկ, այլ ապականեալ կրօնաշունչներուն տեղ իր ուխտին ժողովուրդն հաստատել: Կը վայելէր որ Իսրայելացիք, Մովսեսի ձեռամբ արուած պատուէրին հնազանդելով, ցուցնէին առաջին պատեհութեամբ թէ իրենք ուխտի ժողովուրդ են: Մովսեսի կողմէ ցուցուած տեղը մօտ էր Սիւքեմի, արդի Նապուսի, որ է Աղեզոնական Պաղեստինու ամենէն զեղեցիկ, թերեւս կրնայ ըսուիլ՝ միակ յոյժ զեղեցիկ տեղը: Հոս կանգ առաւ Արքայամ և սեղան շինեց Տէրոյը (Մ. Ժ. 6, 7): Հոս կեցաւ Յակոբ ատեն մը Միջագետէ վերադարձին և կտոր մը գետին գնեց (Մ. Լ. 9, 19): Հոս հասնելէ ետեւ Մովսեսի պատուէրը գործադրելու համար երեք բաներ կային: Նախ անտաջ քարէ սեղան մը կանգնուելու էր Գերազ լեռան վրայ՝ ողջակէզ մատուցանելու համար: «Յեսուսայ առաջին շինութիւնը սեղան մը եղաւ և ոչ թէ բերդ»: Երկրորդ՝ քարէ սիւներ կանգնուելու և կիրով ձեփուելու էին, և ապա անոնց վրայ գրուելու էր «Մովսեսին Օրինաց գրքին օրինակը»: Ըստ ոմանց, այս կը նշանակէ Տանաբանեան: Ըստ այլոց, կ'ակնարկէ Բ. Օրինաց ամբողջ գիրքը: Բայց տիրող ընդհանուր կարծիքը Հրեայ ռաբբիններուն է, այսինքն թէ Տէր Աստուծոյ Մովսեսի տրուած օրէնքները գրուեցան, որոնց թիւը ռաբբինները 613 կը հաշուեն: Գրութիւնը չոր կլիմայի մէջ դարերով անեղծ կրնար մնալ: Արդարեւ Սինայական թերակղզին և Եգիպտոսի մէջ հազարաւոր տարուան փորագրութիւններ կան, որ տակաւին ընթեանի են: Երրորդ՝ օրհնութիւնները և անէճքները կարդացուելու էին: Բանանաները հովտին մէջ մնացին տապանակին քով: Իսրայելի ձերերն ալ մնացին անոնց քով: Հովտին իբր 375 կանգուն լայնք ունի: Հարաւային կողմը հովտէն մինչև 1,000 ոտք կը բարձրանայ Գարիզին լեռը, հիւսիսային կողմը կը բարձրանայ Գերազ, Գարիզինէ 200 ոտք աւելի: Այս երկու լեռներուն գագաթներուն հեռաւորութիւնն է իբր երկու մղոն: Գարիզինի կողերուն վրայ կեցան Ռաքել և Լիայն սերած ցեղերը: Գերազի վրայ կեցան Լիայի և Ռաքելի աղախիներէն սերածները Ռուբէնեանց և Չաբուղոնեանց հետ: Երբ քահանաներն օրհնութիւնները կարդացին, Գարիզինի վրայ կեցած բազմութիւնն «Ամէն» ըսաւ, և երբ քահանաներն անէճքները կարդացին, Գերազի վրայ կեցողներն «Ամէն» ըսին: Տեղւոյն լաւբանական յատկութիւններն այն

պէս էին որ քահանաները լսելի կ'ըլլային, ինչպէս հաստատուած է նորագոյն ուղեւորներու կողմէ կատարուած փորձերով:

Պատերազմը մինչեւ այդ ժամանակ առանձին քաղաքներու դէմ կ'ըլլար, բայց Միւքեմի մէջ Իսրայելի անցուցած ժամանակէն օգտուեցան Քանանու թագաւորները եւ Իսրայելի դէմ կ'ընդդիմանային: Միւքեմի մէջ, որուն իբրեւ մասնակից յիշուած են երկրին եօթը ազգերէն վեցը (Թ. 1): Սակայն երբ դեռ Յեսու անոնց դէմ պատերազմի ելած չէր, դէպք մը պատահեցաւ որուն ոչ կը սպասէր եւ ոչ արժանի էր, եւ որով սակայն աւելի կըցաւ զօրացնել իր դիրքը կեդրոնական Պաղեստինու մէջ, ինչպէս ցոյց տուաւ չորս քաղաքներ կային իրարու մօտ կառուցուած եւ ըստ երեւութիւն տեսակ մը հանրապետական դաշնակցութեամբ միացած, վասն զի իրենց վերաբերող թագաւորի յիշատակութիւն չկայ, այլ միայն ձեռքերու: Այդ քաղաքներէն ամենէն մեծը, Գաբաւոն, «թագաւորանիստ քաղաքի մը պէս» էր (Թ. 2): Երուսաղեմէ իբր հինգ մղոն հեռու էր դէպ հիւսիս, եւ տակաւին ծանօթ է իւր ձիւղ անունով: Միւքեմի քաղաքներէն մին էր Կարիթթարիմ, ուր տապանակը քսան տարի կեցաւ Փղշտացիներուն կողմէ վերադարձուելէն ետեւ (Ա. Թագ. Է. 2): Յետու վարպետութեամբ առած էր Գայի քաղաքը: Ինչպէս ալ հիմա զայն խաբելու համար վարպետութեան զիմեցին: Անոր ներկայացան մաշած հագուստով, մղած հացով եւ ամէն նշաններով որ կը ցուցնէին թէ հեռուոր երկրէ մը եկած են: Զիրենք դեպքաններ կոչեցին հեռուոր ազգի մը որ, լսած ըլլալով յաղթութիւնները զորս Իսրայել շահած էր Յորդանանու արեւելեան կողմը, կը փափաքէր հաշտութիւն կնքել անոր հետ: Վարպետութեամբ չյիշեցին բնաւ Երիզովի եւ Գայիի առումները որ նորագոյն դէպքեր էին: Յետու եւ ձերերը խաբուեցան եւ անոնց հետ դաշնակցութիւն ըրին: Մէկ երրորդ զարու չափ առանձին ապրած էին անապատին մէջ եւ ուստի աւելի դիւրաւ խաբուեցան խորամանկ Գաբաւոնացիներէն եւ մոռցան Տէրօջը հարցնել: Կը կարդանք թէ «անոնց պաշարին նայելով՝ ան մարդիկը ընդունեցին» (Թ. 14), այսինքն՝ «անոնց պաշարէն առին» (տես նոյն համարի լուսանցքը) կամ կերան փորձելու համար անոնց պատմութեան ճշգրտութիւնը, կամ աւելի հաւանօրէն՝ բարեկամութիւն ուխտելու համար: Խաբելութիւնը շուտ իմացուեցաւ, բայց մոռովուրդն իշխաններուն երզումն յարգեց: Այն ատեն ծագեցաւ այդ երզումն յարգելու եւ միանգամայն Աստուծոյ նպատակն ի գործ դնելու խնդիրը: Այս լուծուեցաւ Գաբաւոնացիները խորանին սպասուոր ընելով բոլոր ապագային համար: Անոնց փայտակոտոր եւ ջրկիր կարգուելովը Դեւտացիներն հանգրտացան եւ ոչ Երայեցիներն առ հասարակ: Ողորմութիւն էր զնել զանոնք տեղ մը ուր շուտով պիտի ծանօթանային Տէր Աստուծոյ կրօնին: Անոնց տրուած երզման նուիրականութիւնը կը յայտնուի ետամեայ սովէն, որուն պատճառն էր Սաւուղի Գաբաւոնացիները մեռցնելը (Բ. Թագ. ԻԱ. 1-10): Մեկնիչներուն մեծամասնութիւնը կը կարծէ թէ Գաղաղան ուր անոնք առաջին անգամ Իսրայելացիներուն ներկայացան (Թ. 6) տարբեր էր այն տեղէն, ուր Իսրայել առաջին անգամ բանակեցաւ Յորդանանէ անցնելէն ետեւ:

Հարաւային Պաղեստինու թագաւորները տեսան թէ, Գաբաւոնացիներուն անձնատուր ըլլալուն պատճառաւ, իրենց երկրին մուտքերն արդէն իսկ Իսրայելացիներուն ձեռքը մնացած են, թշնամին երկրին ծոցը մտած է: Հետեւապէս որոշեցին պատժել Գաբաւոնացիները եւ միանգամայն ի դերեւ հանել Յեսուայ ծրագիրները: Այս նպատակաւ հինգ թագաւոր դաշնակցեցան: Գաշնակցութեան գլուխն էր Երուսաղեմի Ագոնիսեղեկ թագաւորը: Կը կարծուի թէ այս անունը Փարաւոն եւ կեսար անուններուն պէս պաշտօնական անուն է, եւ Աբրահամու օրով փրոզ թագաւորին Մելքիսեղեկ անուն փոփոխուած հաւանօրէն արքայական գերզատանի փոփոխում կը ցուցնէ: Երուսաղեմ, Յերուսացիներուն ամուր քաղաքը, ծովուն մակերեսէն 2,400 ոտք բարձր դիրքի մը վրայ կառուցուած եւ խոր ձորերու միջոցաւ սարահարթին մնացեալ մասէն անջատուած, անառիկ կը սեպուէր եւ արդարեւ մինչեւ Դաւթի ժամանակ չէր անունւած: Իր թագաւորը բնականապէս վարիչ եղաւ միացեալ բանակներուն: Անոր զինակիցներէն մին էր Քերթոնի թագաւորը: Քերթոն աշխարհի ամենէն հին քաղաքներէն մին է եւ կը գտնուի Երուսաղեմէ 20 մղոն հեռու դէպ հարաւ: Ուրիչ մը Յերիմութի թագաւորն էր: Յերիմութի որ հիմա Եարմուդ կը կոչուի՝ Երուսաղեմէ 16 մղոն հեռու էր դէպ հարաւային արեւմուտք: Տեղը հին աւերակներով ծածկուած է: Ուրիչ մը Լաքիսի թագաւորն էր: Լաքիս Յուդայի պատմութեան մէջ զօրաւոր եւ ամուր քաղաք էր եւ Սենեքերիմ թագաւորէն պաշարման ենթարկուեցաւ (Ես. ԼՁ. 2): Միւքեմի զինակիցն էր Էգլոնի թագաւորը: Էգլոն Լաքիսի մօտ էր եւ Գաղայի ճամբուն վրայ: Այս թագաւորներն իրենց բանակներով այնպէս շուտ հասան եւ պաշարեցին Գաբաւոն որ Գաբաւոնացիները յանկարծակի եկան, եւ փութով մարդ զրկեցին Յեսուի որ Գաղաղա էր, եւ ըսին, «Քու ծառաներէդ ձեռքդ մի քաշեր, մեզ ազատէ ու մեզի օգնութիւն ըրէ:»

ՍԱՍԱՆԱՅԱԿԱՆ ԺՊԻՏԸ

Երբ հին, հին ատենը «Աստուծոյ որդիքը գացին Տէրօջը առջեւը կայնելու», Յորայ նկարագիրը խնդրոյ նիւթ եղաւ, եւ Սատանան ըսաւ, «Միթէ Յոր ձրի՞ կը պաշտէ զԱստուած:» Սատանային խաղերէն մին է ամէն բարեպաշտութիւն տարակոյսի ենթարկել, ամէն անկեղծութեան վրայ կասկածով նայիլ: Մարդ մը որ կորսնցուցած է իր հաւատքն Աստուծոյ վրայ՝ հաւանական չէ որ վստահութիւն ունենայ ուրիշի վրայ: Եւ ուստի, թէեւ տեսնէ իսկ անկեղծ հաւատացեալ մը եւ անբիծ վարքի տէր անձ մը, միշտ սա ստանայական, հեղեղական հարցումն ունի իր շրթանց վրայ. «Միթէ Յոր ձրի՞ կը պաշտէ զԱստուած:» Ոմանք իրենց ընկերակիցներուն ամենէն յոռի հանգամանքներն երեւան հանելու ճարտարութիւնն ունին, եւ երեւան հանելէ ետեւ կը ծագեն բարեպաշտութիւնը եւ կ'ուրախանան ուրիշներու այն մեղքերուն եւ յանցանքներուն վրայ որոնց իրենք չարժանիք եղան: Մարդ մը որ իր բարեպաշտութեամբ շատ կը պարծէր՝ օր մը յատկապէս աշխատեցաւ զայրացնել եւ անարգել ուրիշ մը մինչեւ որ յաջողեցաւ անոր բարեկութիւնը բորբոքել: Ապա ուրախացաւ որ կըցաւ զայն բարկացնել: Վերջ ի վերջոյ այդ մարդը մարդասպան եղաւ:

Սոսկալի բան է որ մարդ մը կամ կին մը այնպէս ապականեալ եւ մեղաւոր ըլլայ որ ալ հաւատք չունենայ Աստուծոյ եւ բարութեան, ճշմարտութեան եւ արդարութեան վրայ: Աւելի ազէկ է խարուիլ երբեմն եւ մարդոց արժանիքին եւ բարոյականին վրայ բարձր գաղափար մը կազմել սխալմամբ քան այս մշտնջենական կասկածն ունենալ, որ ներքին ապականութենէ եւ չարութենէ կը ծնի եւ որ իր ստորնութեան չափով կը դատէ ուրիշները:

Կրնայ մէկն ըսել թէ իր կարծեօք բոլոր մարդիկ սրիկայ են, այսինքն թէ կրնայ զրամի ուժով ամէն մարդ մոլորցնել: Արդ մարդ մը միայն մէկ «նշ» նկարագիրը կարող է լիովին գիտնալ, եւ այդ անձն է իրենը: Երբ ուրեմն կը պարսարակէ մարդկային ազգին սրիկայութիւնը, յիշելու ենք թէ ինք շատ մարդ չճանչնար, եւ թէ իր ամբաստանութիւնը իսկապէս բուն իր սրիկայութեան խոստովանութիւնն է, նշան մը բուն իր սրտին ամբարշտութեան եւ իր կեանքին ապականութեան: Յախուռն եւ անխտիր ամբաստանութիւններու նշանակութիւնն այս է եւ ոչ ուրիշ բան:

Երբ մէկն Աստուծոյ դարձած եւ Քրիստոս Յիսուսով նորէն ստեղծուած է բարի գործքերու համար, այլ եւս օգը չլինողացներ ուրիշներու դէմ անխտիր որոտալով, այլ այն սիրով որ «ամէն բանի կը զիջանի, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը համբերէ» բարին կը փնտռէ եւ ոչ չարը, եւ շատ անգամ կը գտնէ: Վայ անոր որ հաւատքը կորսնցուցած է Աստուծոյ վրայ, իր հօրը եւ մօրը վրայ, եւ ամէն պարկեշտութեան, արդարութեան եւ ճշմարտութեան վրայ: Այնպիսին խի սրտին աւելցուէն կը խօսի, եւ դատաստանին օրը Տէրը անոր բերնէն պիտի դատէ զայն:

ՏԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ
(Պատ. Ու. Լ. Ուսմիչիսն)

Անցեալ օր մինչ առողջապահութեան վրայ դրուած տետրակ մը կը թղթատէի, աչքիս զարկաւ պատկերը գեղեցիկ տան մը որուն օդը ապականուած էր գէշ շինուած ականներու պատճառաւ: Մահացու կազեր որոնք գոյներով կը ներկայանային, կը տեսնուէին որ վեր կ'ելլէին տանը զանազան կողմերէն, այլեւայլ սենեակներէն եւ սրահներէն, մինչեւ որ վերջապէս կը թունաւորէին տան ներսի կողմը ամբողջ: Զիս կը սոսկացնէր սա մտածումը թէ ինչպէս ապականեալ եւ նողկալի օդերը կրնան մտնել մեր տուներուն մէջ եւ թունաւորել մթնոլորտը որուն մէջ մենք եւ մեր սիրելիները կը բնակին եւ կը քնանան:

Բայց միթէ ուրիշ վատառողջ ներգործութիւններ չեն կրնար գաղտուկ մը մանկ ընտանեկան յարկին մէջ. եւ եթէ զգուշութիւններ կ'ընենք ականներու եւ կոյուղիներու գարշահոտութեանց դէմ, պէտք չէ որ զգուշանանք մտքի եւ նկարագրի զանազան ծածուկ վտանգներու դէմ: Գիտեմ թէ սովորաբար այսպէս չենք ըներ մեր տուններուն նկատմամբ, Դուրսի աշխարհին վրայ կը խորհինք վայրի գաղաններով լեցուն անոնի անտառի մը վրայ խորհելու պէս, եւ տան վրայ կը խորհինք իբրեւ ապահով որբարանի մը վրայ: Հանրութեան կեանքը կը համարինք վտանգաւոր ծով, եւ տունը՝ ժայռերէ զերծ նաւահանդիստ, ուր վերջին ակթը կը փչրուի մեր նաւակէն անդին: Բայց

այս նոր կերպով փափաքով ասդին անդին նայեցան անոնց մէջէն: Արդիւնքը իրենց ակնկալածէն աւելի զարմանալի եղաւ: Եւ կեղեցւոյ զանգակատան վերի ծայրի արձանը փոփոխութիւն մը կրած էր: Յանկարծ իրենց մօտ եկած էր, աչքերնուն շատ մօտիկ:

Խաղին այս անակնկալ արդիւնքին վրայ հիացած իրենց հայրը կանչեցին որ տեսնէր այդ զարմանալի տեսարանը. եւ շատ ուրախացան երբ տեսան որ անոր զարմանքն ալ իրենցին չափ մեծ եղաւ: Բայց ծերունի ակնոցագործը գիտական մօքի տէր մարդ էր. ուստի երբ ետ դարձաւ իր գործին, շարունակ կը խորհէր տղոցը խաղին տարօրինակ արդիւնքին վրայ: Ապակիներու հայթայթած այդ մանկական խաղալիկին մէջ կը տեսնէր գիտական խաղալիկ մը որ պիտի զուարճանայէր այնպիսիներ իսկ որ այլ եւս զաղբած են մանուկ ըլլալէ: Երբ այս խաղալիկը, որ կ'ըսուէր թէ հեռուոր առարկաները մօտ կը ցուցնէր, Գալիլէոսի նկարագրուեցաւ, սա անմիջապէս հասկցաւ անոր արժէքը այնպիսի անձի մը համար որ կը փափաքի երկինքն ուսումնասիրել: Աշխատութեան ձեռք զարկաւ իր գաղափարականին համեմատ, եւ արդիւնքն եղաւ հետադիտակը:

Ամէն օր գործածուած այն լամբարի հանգըստակէտ եւ սիրուն ապակի խողովակին հնարումն ալ պէտք է տղու մը անհանդարտութեան ընծայել: Արկան, աղքատ Զուրիցերացի մը, հնարեց լամբար մը որուն պատրոյզը սնամէջ գլանի մը յարմարցուած էր: Պատրոյզին այս ձեւին պատճառաւ օդի հոսանք մը կ'անցնէր թթուածին հաղորդելով պատրոյզին բոլորակ բոցին ներսը եւ դուրսը:

Այս լամբարը յաջողութիւն մըն էր, բայց իր հնարիչը երբեք խորհած չէր ապակի խողովակ մը աւելցնել, եւ հաւանօրէն երբեք պիտի չխորհէր ալ անոր վրայ, եթէ իր փոքր եղբայրը չխաղար անոր գործատան մէջ մինչ ինք, Արկան, կ'աշխատէր վառած լամբարին վրայ: Տղան տակը բաց շիշ մը ձեռք բերած էր, եւ կը զուարճանար զանիկա դնելով սենեակին մէջ գտնուած զանազան փոքր առարկաներու վրայ: Յանկարծ զանիկա դրաւ լամբարին վրայ, եւ ահա բոցին պայծառութիւնն իսկոյն աւելցաւ շիշին նեղ պարանոցին մէջ: Արկանի արթնութեան միտքը իսկոյն հասկցաւ բանը, եւ իր լամբարը կատարելագործեց ապակի խողովակ մը աւելցնելով անոր:

ՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՈՅԺԸ ԿՈՏՐԵԼ

Մօտերս խուզարկու մը ուրոյն եւ յատկապէս պատրաստուած խշտեակներու մէջ քանի մը շուներ դրաւ որոնք իրենքզիրենք հողալու կարող ըլլալու չափ մեծցած էին: Իւրաքանչիւր շան համար ընտրեց մասնաւոր զբաղում մը որուն կ'ուղղուէր շան ամբողջ մտադրութիւնը ըստ կարի յաճախ: Անկուռն համար որոշած էր ետեւի սրունքներուն վրայ կանգուն կենալ երբ որ պահանջուէր: Ուրիշ մը կը պահանջէր հայել երբ հրամայուէր: Ուրիշ մը իր խշտեակին բոլորտիքը վազվառել, եւս: Վարժեցնողէն զատ ոչ ոք բան մը ընելու էր շուներուն սրունք ժամանակին մեծ մասը ջուրով կ'անցընէին եթէ զգաս չառնէին: Որոշուած թուով ամիսներէ ետքը շուները սպաննուեցան, եւ իրենց ուղեղները խիստ քրննութեան ենթարկուեցան:

Հաչել սորված շան ուղեղին այն մասը որ խօսելու գործարանները կը կառավարէ, միւսներէն աւելի ընդարձակուած էր: Վազելու վարժուած շան սրունքներուն մասնները կառավարող մասը խոշորցած էր: Ամէն պարագայի մէջ ուղեղին այն մասը ամենէն աւելի ընդարձակուած էր որուն միջոցաւ շուներն պահանջուած մասնաւոր գործը կատարուած էր:

Եթէ ուրիշ պատճառաւ հետաքրքրական ըլլայ վերի փորձը, հետաքրքրական է սա նկատուումով որ մեզի կ'օգնէ տեսնելու թէ ունակութիւնը ինչ է իսկապէս, ինչպէս կը կազմուի, եւ մանաւանդ ինչպէս կրնայ ջնջուիլ կամ գէթ զսպուիլ:

Մեքենական կրկնութիւնը կարողացուց շուները մասնաւոր գործողութիւն մը կատարել: Ծարունակ միւսներն գործն ընելով եւ միւսներն նիւթին վրայ մտածելով կ'ընդարձակի ուղեղին այն մասը որուն կը պատկանի գործը, մինչեւ որ կամաց կամաց այնպիսի զօրաւոր եւ անյաղթելի ունակութիւն մը կազմուի որ մեր բոլոր գործերուն եւ մտածումներուն վրայ տիրող ազդեցութիւն մը կ'ունենայ բարի կամ չարի համար:

Հարկաւ կարելի է կամքի գերագոյն ճիշտ մը յաղթել խորհուրդի այսինչ գործողութեան եւ ընթացքին միտման: Ոմանց համար այս կրնայ ըլլալ յոռի ունակութիւն մը ջնջուլու լաւագոյն եղանակը: Բայց եթէ կամքը տկար եւ ունակութիւնը խոր արմատացած ըլլայ, ինչ ընելու է:

Եթէ միտք բերենք շուներուն վրայ կատարուած փորձը, պիտի տեսնենք որ կայ ուրիշ կերպ մը որ լաւագոյն արդիւնքներ կը խոստանայ: Եթէ ուղեղը այսինչ կողմէն կրնայ ընդարձակիլ, կրնայ ընդարձակիլ ուրիշ կողմէ ալ: Ուստի կարելի է, շարունակ եւ ժրութեամբ ուրիշ եւ ըստ կարի հակառակ կողմը գործածելով հակակշռել այն ներգործութիւնը որ արդէն հաստատուած է ուղեղին մէջ՝ այսինչ խոտելի ունակութեան պատճառաւ:

ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԵԱՑ ԴԵՄ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամէն ոճի, աւելի կամ նուազ, իր ծագումն ունի, արեւելքեան մէջ:

Լրբ Աստ Դասար Բորիճ

Միակ ահուելի թշնամին, որմէ Բրիտանիա պէտք է վախայ, ոգելից ըմպելին է:

Դոս Ալլալի

Իր գործած աւերկութիւնները ժանտախտէն, պատերազմէն եւ սովէն համանգամայն մեծ են:

Կլարսթըն

Արեւնոյ ըմպելիքը ոչ միայն մարդու զէպի Սատանան երթալու ճամբան է, այլ նաեւ Սատանային զէպի մարդս երթալու ճամբան:

Տր. Աստ Բարտ

Գինին կիրքերը գրգռելու եւ բորբոքելու բոլոր միջոցներուն ամենէն զօրաւորն է:

Լրբ Պեյլը

Գինովցնող ըմպելիքը ոճի, աղքատութեան, որբութեան, հիւանդութեան եւ խելագարութեան տանող միջոցն է:

Փրոֆ. Յ. Նիւթ

Ես սպիտակամորթներուն խմուքէն աւելի կը սոսկամ քան թշնամիներու բոլոր դանակներէն: Ալլալի Յեղապետ Խամս

Ես երբեք տունս չեմ մտցնիր ոգելից ըմպելիք, վասն զի չար ոգիներ կը համարիմ զանոնք: Սըր Ալլալի Բորտ (Բեմ Կեթիքոյ)

Դպրոցին, մատենադարանին, եկեղեցիին միանամուռ պայքարը գարեջրատան եւ դի-

նետան դէմ, ուրիշ բան չէ, բայց եթէ պատերազմը երկինքին եւ դժոխքին մէջտեղ: Զարլա Պրոֆէր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՆՊԱՍՏԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ի ՄԱԼԱԹԻԱ

Նպաստի բաշխմանը առթիւ Բեյ-յանիին օրաթերթի Դեկտեմբեր ամսաթուերուն մէջ ցաւ ի սիրտ ընթերցանք կարգ մը վայելչութեան հետեւ եւ բացարձակապէս անտեղի առարկութիւններ ընդգէմ Արժանապատիւ Միսիոնարաց, Քաջապէս ծանօթ է Մալաթիոյ Լուսաւորչական, Բողոքական եւ կաթոլիկ Հայոց ընդհանուրին թէ Միսիոնարք անխտիր եւ անաչառ կերպիւ կատարեցին իւրեանց նպաստի մատակարարութիւնն, առանց որեւէ կրօնական բառ մը իսկ արտասանելու: Առ այս ամբողջ Մալաթիոյ Հայերս կը վկայենք: Միսիոնարք մաս առ մաս նպաստ ղրկելէն ի դատ հերոս գարնան սկիզբները եւ ամառուան վերջին ամիսներուն մէջ երկու անգամ անձամբ այցելեցին — Տոգ. Կէյթս, Մր. Պրատուն, Միս Պուշ եւ Միսիս Հէրբէս, որոնք Սը. Երրորդութիւն եկեղեցւոյ գաւիթը նստած բաշխեցին բոլոր Բրիտանեայ կարօտելոց: Եւ սոյն պահուն մէկ քանի Բողոքական պարզամիտ կանայք մօտենալով իւրեանց Բողոքական լինելն յայտնեցին, եւ սակայն պատասխան ընդունեցին թէ «մեր քով Բողոքական, Լուսաւորչական եւ կաթոլիկ տարբերութիւն չունին» նոյնպէս եւ այրեցեալ տանց բաշխելու նպաստին մէջ բնաւին խտրութիւն չտեսնուեցաւ:

Իցիւ թէ յիշեալ յօդուածագիր պարոնայք անձամբ գալով մանրադնին զիտողութեան առնէին Մալաթիոյ Հայոց թշուառութիւններն ամբողջ գործողութիւններն, զորս Արժանապատիւ Միսիոնարք եւ Համեստափայլ Միսիոնարուհիք գործադրեցին անխտիր: Օրինակի համար 1896 Ապրիլ մէկէն սկսեալ Լուսաւորչականաց տղայոց երեք վարժարանները եւ Բողոքականաց վարժարանը բանալ տալով 40 վարժապետաց ամսաթոշակները վճարեցին մինչեւ ցարդ, ինչպէս եւ Եփրատ Դոլէճի իւրեանց հսկողութեան տակ եղած վարժապետաց կը վճարեն: Մայր եկեղեցւոյ ընդարձակ նորայէն վարժարանի՝ որ տակաւին կիսատ էր շինութեան համար պէտք եղած ծախքը վճարեցին. նոյնպէս եւ երեք եկեղեցիներու բացմանը համար ինչ ծախուց որ կը կարօտէին՝ վճարեցին առանց աչառութեան: Մինչդեռ Բողոքականաց սոսկ ժողովատեղի մը համար դոյզն ծախիւք հին տեղի մը նորոգման պէտքն հոգացին, որոյ մէջ այսօր Բողոքականք իւրեանց պաշտամունքն կը կատարեն:

Համեստափայլ Միս Պուշ յանձն առաւ ամբողջ տարի մը վճարել աղջկանց երեք վարժարաններու վեց վարժուհեաց ամսաթոշակներն եւ նոյն վարժատուներու վարձքն: Այսպէս իր շնորհիւ այսօր 400էն աւելի աղջիկներ կը դաստիարակուին, որոնց մէջ հազիւ 50 Բողոքական աղջիկ կը գտնուին: Եւ դարձեալ բնիկ Անգղիացի Համեստափայլ Միսիս Հէրբէս անձամբ գալով ի Մալաթիա՝ տեսաւ հօրմէ եւ մօրմէ զուրկ 55 անտէր եւ անթիւուք որբեր, զորս մայրական խանդակաթ գորովով որդեգրեց, եւ 1896 Ապրիլ մէկէն սկսեալ իւր անձնականէն կը վճարէ իւրաքանչիւր որբի 30ական դրչ. ամսաթոշակ: Յիշեալ 55 որբոց 8 հատը միայն Բողոքականի զաւակ են: Միսիոնարք

երբ վերջին անգամ այցելեցին Մալաթիա՝ բարձր վարժարանները երթալով վարժապետները, վարժուհիները եւ աշակերտները քաջալերեցին անխորհրտ Եւ արդէն իրենք առաքելական դրութեամբ ուր ուրեք որ կ'երթան՝ աղօթասիրութիւն եւ առաքինութիւն կը քարոզեն, ոչ թէ Բողոքականութիւն: Յօդուածագիր պարոնայք թող լաւ մտկայարարեն թէ մեր Լուսաւորչական կղերներու ծոցի Սբ. Աւետարանը եւ բերանունն Աստուծոյ խօսքերը կը կարգան եւ կը քարոզեն ժողովրդեան: Չեմ գիտեր թէ արդեք բերութիւն ունի Միսիոնարաց քարոզածը եւ Հայ կղերներու քարոզածը. նոյն Աստուածը եւ նոյն Աւետարանը չէ որ կը քարոզեն: Ըստ մեզ, Բողոքականաց եւ Լուսաւորչականաց եկեղեցիները գրեթէ տարբերութիւն չունին: Ուստի երախտագէտ սրտով հրապարակաւ մեր անկեղծ շնորհակալիքը կը մատուցանենք Արժ. Միսիոնարաց եւ Միսիոնարութեան, որոնք գթասիրտ եւ անաշուտ ոգով Մալաթիոյ բոլոր քրիստոնէայ կարօտելոց նիւթական վիճակը անխորհրտ ուշադրութեան առին մինչեւ ցարդ, եւ տակաւին յոյս մեծ ունինք թէ այսուհետեւ ալ պէտք եղած նպաստի օգնութիւնները պիտի հասցնեն տեղւոյս կարօտելոց: Անցեալները տեղւոյս կաթողիկէ Հայոց Գեր. Միքայել վարդապետն եւս անտեղի կերպիւ գեղեցած էր իր հոգեւոր պետին թէ Վիսիոնարք Մալաթիոյ կաթողիկէները նպաստէ զրկեցին: Այս առթիւ Բ. Դոնէն, տեղւոյս կառավարութեան հրամայուելով, ստուգութիւնը պահանջուեցաւ: Ուստի Վսեմ. կառավարիչ Աստիվ պէյը, նպաստի տոմարները մի ըստ միով ջննել տալով, յերեւան բերաւ մինչեւ ցարդ կաթողիկէ Հայոց ժողովրդային համեմատութեամբ տրուած 31 հազար զրչ., զոր ստանալուն յիշեալ վարդապետն եւ Լատինաց Ապոնա էֆն. ստորագրեցին եւ հաստատեցին:

Այս առթիւ մեր խորին եւ անկեղծ շնորհակալիքը կը մատուցանենք մեր վեհապետին, որ իւր հայրական վերին հոգածութեամբ Հայ թշուառացս օգնութիւններ մատակարարել տուաւ տեղւոյս ազնուասիրտ կառավարիչ Աստիվ Պէյի ձեռքը: Աս այս Մալաթիոյ բոլոր Հայերը երախտագէտ սրտով աղօթքներ մատուցին Օսմ. փառապանծ գահուն համար:

Մալաթիա ԳՐԻԳՈՐ Ե. ԹԱՆՅԱՆՆ
Յունվ. 17/29, 1897

ՆԱՍՏԱՎ ՈՒՐՅԱՅԷ

1896 Սեպտ. 1էն սկսեալ տեղւոյս Հայոց վարժարանք լաւագոյն վիճակի մէջ են: Հայ Լուսաւորչականք եւ Հայ Բողոքականք ի միասին ունին 14 վարժարաններ, որոց եօթը Մայր եկեղեցւոյ շրջափակին մէջ, վեցը Բողոքական եկեղեցւոյ դաւիթը եւ մին բոլորովին դուրսը կը գտնուին:

Վարժարանաց ամէնն ալ կը խնամուին հոգաբարձու մարմնէ մը, որ կը բաղկանայ վեց պատուաւոր տեղացիներէ եւ բարեպաշտ Միսիոնարութիւնէ մը, որոյ անունը, Աւետարանի պատուական ընթերցողաց ծանուցանել, մեզ համար կարի հաճելի պիտի լինի, Միս Գորինա Շաթըզ:

Միս Շաթըզ իւր անդուլ եւ անձնուրաց աշխատութեամբ յաջողած է վերջապէս Ուրֆայի դպրոցները բարւոքեալ եւ կանոնաւոր դրութեան մը տակ դնել: Ըստ իւր կարգադրութեան եւ ծրագրին ունինք Մայր եկեղեցւոյ շրջափակին մէջ աղայոց

բարձրագոյն նախակրթարանը, որոյ ուսուցիչներն են Այնթապի Կ. Թ. Գոյէճի շրջանաւարտներէն բնիկ Եղգոտոցի եւ Հայ Բողոքական Արամ էֆ. Թորոսեան, նաեւ տեղւոյս Լուսաւորչականաց վաղեմի դասատուներէն Գէորգ էֆ. Ոսկերիչեան: Առաջինը ստանձնած է վարժարանին գիտական դասերը եւ Օսմանեան լեզուն, իսկ երկրորդը ստանձնած է Հայ գրականութիւնը: Այս դպրոց կը յաճախեն 65 աշակերտք, որոնց մեծ մասը Լուսաւորչական են եւ փոքր մասը Բողոքական: Դարձեալ Միս Շաթըզի բարեկամ աշխատութեան շնորհիւ Հայ Բողոքական եկեղեցւոյ շրջափակին մէջ վերաբացուած է Օրիորդաց Բարձրագոյն նախակրթարանը, որոյ ուսուցչուհիներն են Մարաշու Օրիորդաց Գուլէճի աշակերտուհիներէն բնիկ Ուրֆայի, քաղցրաբարոյ Օր. Եւնիկէ Ապուհայաթեան եւ Այնթապի Օրիորդաց Բարձրագոյն Վարժարանի շրջանաւարտներէն բնիկ Ուրֆայի Ազնուաբարոյ Օր. Օսաննա Նիկողոսեան: Վարժարանս ունի Լուսաւորչականներէ եւ Բողոքականներէ խառն յիսուհիներ աշակերտուհի: Ունինք նաեւ տարրական չորս նախակրթարան, որոց երկուքը աղայոց եւ երկուքը աղջկանց կը վերաբերին: Ունինք ութը ծաղկոց, որոց հինգը աղջկանց համար եւ երեքը աղայոց համար են: Այս դպրոցները երկու եկեղեցւոց շրջափակներուն մէջ կը գտնուին: Վարժարանք այնպէս կարգադրուած են որ ծաղկոցներու մէջ Այրբեւարան եւ Զրօսարան լրացնող աշակերտք եւ աշակերտուհիք իրենց սեռին յատկացեալ տարրական նախակրթարանը կ'առնուին: Հոն երկու տարի աշխատելէ վերջ, եթէ կարող հանդիսանան լաւագոյն քննութիւն մը ալ Մալաթի թուաբանութեան, Հայերէն ամենալաւ ընթերցանութեան, Օսմանեան լեզուով Մուխթարար Կիւլաէսթէի եւ Հայերէն քիչ շատ լաւ գեղագրութեան, կ'ընդունուին բարձրագոյն նախակրթարանները: Այս վարժարանաց մասնաւանդ ծաղկոցներու աշակերտաց թիւը օր աւուր բարձրանալու վրայ ըլլալով, հոգաբարձութիւնն ստիպուած է դպրոցներէն ու մանց երկու երբեմն ալ երեք ուսուցիչ կամ ուսուցչուհի կարգել: Ծաղկոցներու տասներեք ուսուցիչներուն բաց ի երկուքէն, որ վարժապետներ են, ամէնն ալ ուսեալ օրիորդներ են եւ մին ուսեալ տիկին մը:

Արդարեւ ուսման համար մեծ եռանդ մը ծաղած է Ուրֆայի Հայ ժողովրդեան մէջ, վասն զի այժմ ունինք կանոնաւոր դպրոց երթեւեկող 1,500էն աւելի աշակերտներ, որոց մեծ մասը աղջիկներ են: Ասոնցմէ դատ թաղերու մէջ ունինք 450 աշակերտուհիներ, որոնք կը բաղկանան տղիտուութեան մէջ մեծցող չափահաս աղջիկներէ: հարսներէ եւ տարեւոր կիներէ: Ասոնց ընթերցանութիւն ուսուցանելու համար կարգուած են տասներեք ուսուցչուհիներ, որոց 15ը կարդացնելու կարող այրի կիներ եւ 3ը սոցա վերայ տեսուչ կարգուած այրիներ են: Սրտիցաւօք կը յայտնեմք թէ ինչ ինչ պատճառներով այս տարի մեր Մանկապարտէզը չը բանալու հարկադրուեցանք:

Միս Շաթըզ, որոյ զբաղումները բազում են եւ բազմաճիւղ, վերջերս դպրոցներու տեսչութեան մեծ պէտքը տեսնելով, իրեն միսիոնարութիւն ընկեր մը հրաւիրեց, Միս Չեմպըզ, որոյ մասնաւոր գործը դպրոցներու տեսչութիւն ընել է եւ կ'ընէ յաջողապէս:

Մենք Ուրֆայի Հայ ժողովուրդը շնորհակալ ենք Բարձրեալն Աստուծոյ որ մեզ համար յարոյց բարերար մը, որոյ առատաձեռնութեան շնորհիւ կը կառավարուին մեր դպրոցներ, նաեւ երախտագարտ ենք զիւր ցազնուհի Միս Շաթըզի անդուլ եւ անձնուրաց աշխատութեան, որուն միջոցաւ կը յառաջդիմեն մեր վարժարանք:

Ուրֆա Ս. Յ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Յունվ. 26, 1897

Պատ. Մ. Գընաճեանի ձեռնագրութեան նկարագրութեան վրայ որ հրատարակուեցաւ Աւետարանի 6 թուով կ'ուզուի այս առթիւ սա յաւելուին ընել թէ վիճակին Հայոց առաջնորդը շնորհաւորական գիր մը դրկած էր, որ առաջնորդ հօր խնդրանօք հրատարակաւ կարգացուեր է հանդիսականներուն առջեւ:

ՄԱՆԱԳՈՅԺ

Լրացեալ տարւոյն վերջին գիշերը բամբուլ Եղսա Յ. Գարբիէլեան յետ 15օրեայ հիւանդութեան ի Տէր հանգեաւ:

Հանգուցեալը — Պատ. Յակոբ Գարբիէլեանի կիներն — բնիկ Մարթերդցի, շուրջ 22 տարի անոջ իւր ամուսնոյ եւ քանի մը զաւակաց ընկերակցութեամբ, Մշոյ երկիր եկած եւ օրինակելի դիքը մը դրաւած էր Մշոյ եւ Մոկաց մէջ: Ուշադրութեան արժանի է մանաւանդ Պատուելի գերդաստանի տիպար կեանքը նոյն իսկ Մոկուէք գիւղին մէջ ուր իրենց օտարութեան մեծ մասը անցուցած են: Որպէս Պատ. Յակոբ իւր սիրելի բնաւորութեամբ ազգայնոց սէրն ու համակրանքն դրաւած է, գրեթէ նոյնչափ բարեյիշատակ տիկինն իւր մայրական օրինակելի դիքով պատկանած ձգած էր գինք շրջապատող ընտանեաց վրայ: Բամբուլ Եղսայի համար երէք շոյալանք մը չէ ըսել թէ ունէր աննեղ հոգի մը, իւր սեռին յատուկ փախուկ խիղճ մը, քրիստոնէական բարի բնաւորութիւն մը որ կը գովուէր ամենէն, գթատ սիրտ մը դէպ ամէն կարգի տառապելու: Տարիքը թէեւ 43-50ի կ'երթար եւ վատառողջ կազմութիւն մը ունէր, սակայն իւր փոքրիկ զաւակաց համար քաջարի սիրտ մը կը կրէր որք այժմ համբերատար հօր խնամքին ձգուած են: Ասոնք թուով ութ են: Պետրոս եւ Տիգրան Ամերիկա են, Միհրան իր յօժար անձնուրութեամբ ձրի կը պաշտօնավարէ ի Հաւատարմիկ, Գարբիէլ նոյնպէս ձրի օգնական դասատու է տեղւոյս դպրոցին: Երկու դստրիկներէն մեծը Բաղոյ աղջկանց վարժարանին աշակերտ է եւ մնացեալը միայնակ հօրը միսիոնարութիւնն են տան մէջ:

Յերկնուստ ամօքիչ միսիոնարութիւն կը հայցեմք այրիացեալ Պատուելիին եւ մայրագուրկ զաւակներուն:

Մուշ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Յունվ. 8/20, 1897

Պանտրմայէ ալ կը գրուի թէ Յունվ. 20ին տեղւոյն դպրոցի նախկին աշակերտուհիներէն Օր. Եսթեր Արապաճեան տասներեկնամեայ ծաղիկ հասակին մէջ կնքեր է իր մահկանացուն եւ թաղոււմը սրտատուէ կերպով կատարուեր է ընկերուհիներու ստուար բազմութեան մը ներկայութեամբ: Հանգուցելոյն կեանքին համար շատ լաւ վկայութիւն կը տրուի:

ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Փետր. 8 ըստ Յուլի, եւ փետր. 20 ըստ Լատ. 1897

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղային արձանագրիչ պաշտօնեաներու կողմէ կեդրոնական կառավարութեան մատուցուած տեղեկագիրներուն նայելով, 1896 տարւոյն մէջ Անգղիոյ եւ Ուէյլի ծնունդներուն համագումարն եղած է 917,201, այսինքն բնակիչներուն իւրաքանչիւր հազարին 30էն քիչ նուազ ծնունդ: Նոյն տարւոյ մահերու համագումարն եղած է 527,929, այսինքն իւրաքանչիւր հազար բնակիչի 17էն քիչ աւելի մահ: Ուրեմն բնակիչներու բնական յաւելումն եղած է 389,272: Մեռածներէն 135,487ը մէկ տարեկանէ վար մահուկ են եւ 142,793ը վաթսուէն տարեկանէ վար մարդիկ: Այսինքն Անգղիոյ մէջ ծնածներուն կէսը կամ կը մեռնի մէկ տարեկան չեղած, կամ կ'ապրի վաթսուէն աւելի տարի:

— Հիւսիսային Բեւեռասիոյ Տր. Նանսէն հիմա Անգղիոյ մէջ է, ուր յոյժ սիրալիր ընդունելութիւն մը գտաւ: Ահաւասիկ քանի մը կէտեր այն ճառէն զոր ինք Լոնտոնի մէջ խօսեցաւ: Սառոյցի վրայ իր ուղեւորութեան մէջ որուն հետաւորագոյն կէտն եղած է հիւսիսային լայնութեան 86 աստիճանը եւ 14 րոպէն, եւ հիւսիսային լայնութեան 80րէ եւ 85րէ զուգահեռականներուն միջեւ Յրափ երկարատեւ ասարուբերութիւններու միջոցին, եւ երկայնութեան աւելի քան 120 աստիճաններու վրայ, բնաւ ցամաք երկիր չէ տեսնուած, եւ խորաչափական ամէն փորձ ցուցած է թէ ծովը 3է մինչեւ 4 հազարամետր խոր է: Հետեւեալէն շատ կարելի է որ Հիւսիսային Բեւեռն է լոկ կէտ մը սառուցեալ Ովկիանու վրայ եւ Արջային եւ Հակարջային սահմաններու պայմանները կատարեալ հակապատկերներ են: Սառոյցն ստէպ շատ անհանդարտ է, հոսանքներու շարժմամբ եւ հովին ազդեցութեամբ շարունակ ճեղքուելով եւ դատուելով, այնպէս որ սառի անազին զանգուած մը կը քուրի ուրիշի մը վրայ, եւ սառոյցի ամբողջ մակերեսը ահօսներու ցանցակերպ մը կ'ըլլայ, որով սաստիկ կը շրջուարանայ յառաջնադասութիւնը: Թերեւս կարծուի թէ երկար ձմեռն սաստիկ ցուրտին պատճառաւ սառոյցը աակի շուրին շարժումներուն դիմադրելու չափ կը կարծրանայ: Սակայն այդպէս չէ իրողութիւնը: Յրափ մարդիկը տեսան թէ սառոյցը, երբ այլեւայլ խաւեր իրարու վրայ չեն բարդուած, տարւոյն եղանակներուն համեմատ կ'ուենայ իբր եօթնէն մինչեւ տասներեք ոտք թանձրութիւն: Այսքան դիւրաբեկ նիւթ մը ներքեւի քիչ անգամ կամ ոչ երբեք հանդարտ գտնուող շուրին անեղ քանակութեան ճնշումին տոկալու բոլորովին անբաւական կը թուի: Խոզարկուները միշտ անընկեր չմնացին: Միաժամանակեւ իսկ մեր տեսնուեցան Յրափ հիւսիսային լայնութեան գրեթէ մինչեւ 85 աստիճանը: Փոկեր նշմարուեցան ամառը, եւ մէկ անգամ ալ ծովածի մը: Հիւսիսային լայնութեան 84րէ աստիճանին վրայ նաւուն մօտ արջեր զարնուեցան հրացանով եւ մինչեւ 85րէ աստիճանը՝ աղուեսու հետքեր գտնուեցան: Այս իրողութիւններէն կարելի է հետեւցնել թէ ցամաքը մօտ է: Սակայն չորքոտաններու համար անսովոր բան մը չէ երկար ուղեւորութիւններ ընել երբ

իրենց բնավայրերը կը փոխեն կամ ուտելիք փնտռելու կ'ելնեն:

— Ռուս կառավարութիւնը նախազգուշական այրեայ տնօրինութիւններ ըրած է ժանտախտի դէմ: Ատոնց մին է իր Մահմետական եւ Քրիստոնեայ հպատակներուն թոյլ չտալ որ ուխտի երթան իրենց կրօնական սրբավայրերը: Որոշած է նաեւ բժիշկներ զրկել Հնդկաստան ժանտախտին պատճառները փնտռելու եւ իմանալու նպատակաւ: Ռուս պաշտօնաթերթը պիտի հրատարակէ արտին ծաւալման վերաբերող ամէն վստահելի լուր: Պաշտօնապէս կը հերքուի սա լուրը թէ ժանտախտ ծագած է Աֆղանիստանի Գանտար քաղաքին մէջ: Հնդկաստանի կառավարութիւնը որոշած է որ ուխտագնացները Մատրասի նաւահանգիստէն ճամբայ ելլեն: Քաղաքին բնակիչներն այս տնօրինութեան դէմ բողոքած են: Պոմպայէ գրող Աւստրիացի բժիշկ մը հիացմամբ կը խօսի Հնդկաստանի կառավարութեան վրայ որ, կ'ըսէ, բնաւ ջանք չ'ընայ երբ քաղաքին մէջ արտը բնաջինջ ընելու համար: Ախտին դէմ գործածելի նախազգուշական միջոցներուն վրայ խորհրդակցելու նպատակաւ վեներտիկի մէջ գումարելի միջազգային համաժողովին բացումը Փետր. 10էն Փետր. 16ի թիղուեցաւ եւ սկսաւ ճանով մը Իտալական պատուիրակ Պոնէն կոմսէն, որ Ումպերթօ թագաւորին անուանով բարի գալուստ մաղթեց բոլոր ժողովականներուն:

— Կ'արժէ որ մեծ ուսուցիչները մեծ քաղաքագէտներու եւ մեծ զօրավարներու պէս ազգային պատիւ ընդունին: Անցեալ շաբթու Բէնթըրպըրիի արքեպիսկոպոսը Անգղիոյ ամենէն հոշակաւոր ուսուցիչներէն Տր. Արնոլտի ի պատիւ կանգնուած կիսանդրիի մը բացման նախադասեց Բըկլի դպրոցին մէջ, որուն տնօրէնութիւնը վարած է Տր. Արնոլտ բազում տարիներ: Տր. Արնոլտ կը քարոզէր թէ դաստիարակութեան մեծ նշանակութիւնն է նկարագրի զարգացումը:

— Անցեալ երեքշաբթի Ռուսիա իր առաջին կանոնաւոր մարդահամարն ըրաւ: Իր բնակիչներուն նկատմամբ մինչեւ հիմա տրուած բոլոր վիճակագրութիւնները լոկ ենթագրական էին եւ ճշմարտութեան մօտաւոր հաշիւներ միայն: Այս անգամ ուղեւեցաւ մարդահամարի գործողութիւնն աւարտել մէկ օրէն, բայց անհրաժեշտ դատուեցաւ համրող պաշտօնեաներն արտօնել որ, ուր որ հարկ է, երկու օրէն կատարեն իրենց գործը: Համրողներուն տրուած պաշտօնաթղթերուն վրայ 17 հարցում կայ, որով կ'ուզուի արձանագրելի անձին անունը, սեռը, վիճակը, զբաղումը, կրօնը, եւն: Եւ որովհետեւ կը հաշուուի թէ բնակիչներուն հարիւրին աւելի քան 80ը կարճալ գրել չեն գիտեր, ըստ ոմանց՝ կառավարութիւնն աղէկ բան չըրաւ այդքան մանրամասն տեղեկութիւն պահանջելով: Նախնական մարդահամարին արդիւնքը դարնան սկիզբները պիտի հրատարակուի:

— Յունի. 26ին եւ 27ին Անգղիական զօրքերը սաստիկ կռուէ մը ետեւ գրաւեցին Պիտա որ կը գտնուի Նիկէր գետին եզերքը: Պէտք չէ զայս չ'իտել Պէնին քաղաքին հետ, որ ծովեզերքին աւելի մօտ է: Պէնինի դէմ զրկուած արշաւախուսքը Փետր. 10ին ճամբայ ելաւ, եւ Փետր. 16 թուականաւ հետագրի մը նայելով մեծ ընդդիմութեան կը բարխի: Պիտա 5-600 մղոն հեռի է ծովեզերքէն, եւ հոն զրկուած արշաւա-

խուսքը քանի մը շաբաթ առաջ ճամբայ ելաւ: Թշնամին որ 20,000է կը բաղկանար՝ մեծ քաջութիւն ցուցուց, իր հեծելազօրքը կրկին կրկին յարձակում ըրաւ եւ իր վարպետ հրացանաձիգներն այնչափ մօտեցան որ իրենց եւ Անգղիացի զօրաց քառակողմ գունդին միջեւ 100 ետրոայի հետաւորութիւն մը մնաց: Սակայն այնպէս արագ շարժուեցան թնդանօթներէն եւ արագհարուածեան զէնքերէն որ վերջապէս ետ քաշուեցան, եւ Անգղիացիներն առին անոնց քաղաքը: Սիւսիսի կ'ըսէ, «Այս կողմը Բրիտանական ազգին տուաւ լայնածաւալ, բարեբեր եւ բազմամարդ երկիր մը ուր դիւրին է հասնիլ:» Պիտայի էմիրին գործերն եղան այս արշաւանքին պատճառ, եւ Անգղիացիներու կողմէ զրկուած զօրքերն էին ծովեզերքնակ տեղացիներ որոնց կ'առաջնորդէին Անգղիացի 23 սպաներ:

— Յրանսական Խորհրդարանին մէջ տակաւին կը շարունակուի ինչ որ Սիւսիսի կը կոչէ «օտարներու դէմ հալածանք» Անցեալ տարի եւ նախընթաց տարին օրէնսդրութիւնը օտար բժիշկներու դէմ էր: Հիմա ալ Երեսփ. Ժողովին ներկայուած է առաջարկ, մը որով կ'ուզուի տեղաբնակ օտարականներէն նոյն տուրքն առնել որ կ'առնուի զինուորական ծառայութեան գերծ կացուցուած Յրանսացիներէն, յաւելուածաբար ալ 3 առ հարիւր եկամուտի տուրք մը: Ուրիշ առաջարկով մը կ'ուզուի բոլոր օտարազգի ուսուցիչներուն թոյլ չտալ որ իրենց պաշտօնն ի գործ դնեն Յրանսայի մէջ: Թաւ կը պախարակէ այս առաջարկները ներշնչող աշխարհավարութիւնը «իբրեւ ցաւալի եւ մեր ազգին ազատական եւ ասպնջական աւանդութիւններուն հակառակող»:

— Անգղիոյ մէջ ձորի մը վրայ երկաթուղւոյ կամուրջի մը կառուցման պահուն լանտակերտին մէկ մասը փլաւ, եւ տասներկու մարդիկ ձորն ինկան եւ մեռան:

Անցեալ չորեքշաբթի Յրանսական ծովեզերքին մօտերը ծովէն ազատուած Անգղիացի նաւազ մը պատմեց թէ նոյն օր ընկողմած Անգղիական շոգեխաւու մը 21 նաւաղներէն միայն ինք ողջ մնաց:

— Ռուսիոյ գահաժառանգ Կէօրկիյ մեծընտանը կովկասէ մեկնելու է պտոյտ մը ընելու համար Միջերկրականի մէջ:

— Յրանսական մայրաքաղաքէն, Փրիթորիայէ, կը հեռագրուի թէ Գրուկըր նախագահը Տր. Ճէյմսընի արշաւանքին պատճառաւ 500,000 Անգլ. ոսկւոյ տուգանք մը պիտի պահանջէ արտօնեալ կամ ինքնավար ընկերութեանէն:

— Լոնտոնի Լորտ քաղաքապետին հանգանակութիւնն ինպաստ Հնդկաստանի կարօտեալներուն՝ անցեալ շաբաթ օր անցած էր 300,000 ոսկին, եւ կարօտեալներու թիւը որոնց կ'օգնէ կառավարութիւնը գործ տալով՝ հասած էր 2,750,000ի:

— Գերմանիոյ մէջ կառարուած ընարուութեան մը պահուն երկու մրցակիցներ գրեթէ հաւասար թուով քուէ ստացան, որ շատ հաղուաղէպ բան է: Տոնանէլինկէնի դաւառին մէջ Ազգային Ազատականներու ընտրելին առաւ 10,262 քուէ, իսկ Կաթոլիկ կուսակցութեան ընտրելին՝ 10,256 քուէ:

— Անգղիոյ Երեսփ. Ժողովը նկատողութեան առաւ Անկլիքան Եկեղեցին պետական ըլլալէ զարբեցնելու եւ պետական նպաստներէ զրկելու առաջարկ մը, զոր մերժեց 86ի դէմ 204 քուէով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի, Ռամազանի 13-րդ օրը, Վեհ. Սուլթանն ըստ սովորութեան թոփգափու պալատը գնաց և Նուրի Երեմի կրօնական արարողութիւնը կատարելու: Ն. Կ. Վեհափառութիւնը կառքով Տումայազլէ գնաց եւ անտի թէրեֆէն շոգեմակոյղով Սարայպուրունը: Երեկոյն ժամը 11ին ատենները (Ը. Թ.) վերադարձաւ նոյն ճամբով, Շոգեմակոյղին մէջ Ն. Կ. Վեհափառութեան քով կը գտնուէին Պատերազմական եւ Մոսկովային նախարարները եւ արքունեաց հրամանատար Օսման փաշա: Թէրեֆէնի առջեւ կ'երթար Արքունի նաւարանի յատուկ շոգեմակոյղ մը, իսկ ետեւէն կ'երթային եօթն ուրիշ շոգեմակոյղներ, որոնց մէջ կը գտնուէին կայս. հետեւորդները: Նաւային իշխանութեան յատուկ նաւեր շարուած էին կայս. թափօրին անցքին վերայ, եւ Օսմ. պահակախումբերու եւ օտար զետպանատուններու պահակախումբերուն նաւազները բարեւի կեցան թափօրին անցքին ժամանակ:

— Կրեւէի ոստիկան զինուորներու առժամեայ հրամանատար Անդրիայի Պոր հաղարպետը ժողովեամբ կ'աշխատի կազմակերպել ոստիկան զինուորներու խումբերը եւ շրջուն պահակներ զրկած է որ հոկեն դաւաճներու հանրային անդորրութեան: Յունաստանի գահաժառանգ Եորկիոս իշխանը, որ Կրեւական շուրերուն վրայ երեւցաւ Յունական ծովամարտի նաւերու փոքրիկ տորմիդով մը եւ որուն կիրակի հասան Յունական զօրք բերող քանի մը շոգեմակոյղ, տէրութեանց կողմէ եւրոպական նաւատորմերու հրամանատարներէն հրաւիրուեցաւ իր նաւերը եւ զօրքերն հեռացնել կղզւոյն մօտերէն: Ընդհանրապէս կը կարծուի թէ կղզւոյն անդորրութիւնն այլ եւս պիտի չլրդովուի: Եւրոպական պետութիւններն Յունաստանի այլեւայլ ծանուցադրեր մատուցած են իր ընթացքին նկատմամբ հանդէպ Կրեւէի: Չորեքշաբթի հեռագրուեցաւ Աթենքէ թէ տէրութեանց զետպանները կը կարծեն որ խնդիրը լատաղութեամբ պիտի կարգադրուի:

— Գիւղէ մը գանձելի տուրքերը մոտաւորներու ձեռամբ բնակիչներուն մէջ բաժնելու գրութիւնը առիթ տուած է քանի մը զեղծումներու, զոր օրինակ մոտաւորներն ազգականներուն եւ բարեկամներուն նպաստաւորման: Այս պատճառաւ որոշուած է այսուհետեւ արոց բաշխման այդ գործողութիւնը կատարել ելեւմտական պաշտօնէի մը ձեռամբ եւ քննիչի մը հսկողութեամբ:

— Դարձեալ Դատական նախարարութեան ուշադրութեան յանձնուած է սա խնդիրը թէ դաւաճներու մէջ չափէն աւելի կ'ուշացուի բանտարկեալներու հարցաքննութիւնը եւ անոնց վերաբերող դատական գործողութիւններու կատարումը: Նախարարութիւնն ալ դարձեալ պատուիրեց դաւաճային ձեռնհաս իշխանութիւններուն որ դատական եւ ոստիկանական պաշտօնեաներ փութով եւ կանոնաւորապէս ի գործ դնեն իրենց պարտականութիւնը:

— Չինուորական հաստատութիւններու անունով կատարուած հանգանակութեան գումարն հասաւ 11,797,483 դահ.ի:

— Սիւրբայի եւ Անտիոքի պահեստի զօրքերն արձակուած են: Ատանայէ պահեստի զօրաց վաշտ մը զրկուած է Մէրսին, Հալէպէ ալ վաշտ մը զրկուած է Իսքէնաէրուն:

— Հայտարարչայի հիւանդանոցին բժիշկ Տր. Շաքիր պէյի հրամայուած է Բամարան կղզին երթալ հսկելու համար ուխտագնացներուն առողջութեան որոնք աստիճանայի պիտի ենթարկուին հոն: 5,500 ուխտագնացներ արդէն հասած են Մեքքէ: 8,000 ուխտագնաց ձաւայէ մեկնելու վրայ են Մեքքէ երթալու համար, ուրիշ տեղերէ ալ մեծ բազմութիւն ճամբայ ելած է: Էրզրումէ մինչեւ Շաթի բերանը գտնուող սահմանազրկի իշխանութիւններուն պատուիրուած է որ Պարսկաստանէ եկող ուխտաւորներու թոյլ չտան Օսմ. սահմանազրկին անցնիլ, մանաւանդ Պարսկաստանէ մեղաւորներ բերել ի Բէրպէլա:

— Կիւլիանէի զինուորական միջնակարգ վարժարանի շէնքը Բժշկական վարժարանի իրաւասութեան պիտի ենթարկուի եւ իբրեւ հիւանդանոց պիտի գործածուի:

— Սէլանիկ-Մանասթըրի երկաթուղւոյն պաշտպանութեան համար երեք հարիւր ոստիկան զինուոր պիտի ժողովուի: Ասոնցմէ հարիւրը հեծեալ պիտի ըլլան:

— Հանրային պարտուց վարչութիւնը, Անատուրի երկաթուղեայ երաշխաւորութեան գումարին ի հաշիւ, Օսմ. Պանքային վճարած է 1,101,400 Օսմ. ոսկի: Սէլանիկ-Մանասթըրի երկաթուղւոյն երաշխաւորութեան գումարին ի հաշիւ ալ վճարած է 76,300 Օսմ. ոսկի:

— Վեհ. Սուլթանը վաւերացուց Տ. Քոնսթանթինոսի ընտրութիւնն իբրեւ պատրիարքական տեղապահ Յունաց: Կիրակի Տ. Քոնսթանթինոս Երջուզի պալատը գնաց իր շնորհակալութիւնները մատուցանել այդ առթիւ, եւ յետոյ Բ. Դուռը երթալով այցելութիւն տուաւ Մեծ եպարքոսին եւ Դատական նախարարին: Երեքշաբթի ուրիշ տեսակցութիւն մը ունեցաւ Մեծ եպարքոսին հետ, նաեւ Ներքին գործոց նախարար Մէմուտի փաշայի հետ:

— Անատուրի նահանգներու կայս. ընդհանուր քննիչ Շաքիր փաշա Բ. Դուռը զրկած է այլեւայլ տեղեկագիրներ, որոնց միջոցաւ կը հաղորդէ իր զիտողութիւններն այն տեղերուն վրայով ուր այցելած է:

— Օսմ. պետութեան երկաթուղւոյ գծերուն ըստնապէս երկայնութիւնն է հիմա երկու հազար չորս հարիւր քսաներկու մղոն:

— Կիրակի Հայ կաթողիկոսներու պատրիարք Տ. Աղաբան ուտելիք բաշխեց Սաադիւղի կարօտեալներուն:

— Դալայիոյ մէջ Գարաքէօյի կամուրջին գլուխը նամակատան մասնաճիւղ մը բացուեցաւ, որ ունի նաեւ գաւառներու յատուկ հեռագրական ճիւղ մը:

— Եգիպտացի հանգուցեալ Հալիմ փաշայի թողած ժառանգութեան առթիւ բաւական ատենէ ի վեր բացուած դատ մը վերջապէս լինցաւ: Որոշուած է որ ժառանգորդներն Եգիպտոսի Մահմադական կրօնականներուն տան ամբողջովին ինչ որ Հալիմ փաշա կտակով յատկացուցած է անոնց:

— Սէլանիկի մէջ ձերբակալուեցաւ Եման անունով աւաղակ մը, որ պետն է Սէլանիկ-Տէտէաղաճի երկաթուղւոյ երկրաչափներէն մէկը անցեալները լեռն հանող աւաղակալութիւն, որուն փրկանքի բաւական մեծ գումար մը հատուցուեցաւ:

— Քանի մը շաբաթէ ի վեր բաւական հետաքրքրութիւն շարժող դատ մը կայ Իզմիրի մէջ: Դատը վարողն է Քրէտի Լիոնէ, եւ դատի կոչուածներն են երկու վաճառական, Բէօ-

չէքողու եւ Եոսիֆօղլու: Ամբաստանութիւնը սա է թէ փոխ դրամ տրուած էր աւանդ առնելով կարգ մը կողովներ, որ ափիոն կը պարունակեն կը կարծուէր, բայց իրօք անարժէք բաներ կը պարունակէին: Ամբաստանեալները դատապարտուեցան Քրէտի Լիոնէի հատուցանել փոխ առնուած ամբողջ գումարը: Բաց աստի, Բէօչէքողլու վեցամսեայ բանտարկութեան դատապարտուեցաւ, Եոսիֆօղլու ալ քառամսեայ բանտարկութեան:

— Այս շաբաթ ողողումներու շաբաթ մը եղած է գաւառներու համար: Գոսովա նահանգին մէջ ի Միթրովիցա քաղաքին շուկան եւ վարի մասը, նաեւ շրջակայից մեծ մասը ողողուեր են, բայց կհանքի կորուստ չէ պատահեր: Շքտարայի մէջ Տրին եւ Պոյանա գետերը դարձեալ յորդեր եւ վնաս հասուցեր են, թէեւ մանրամասնութիւնները դեռ ծանօթ չեն: Այսօրն կուսակալութեան մէջ Գարահիսար, Նաղլիլի, Մանիսա եւ Սումա քիչ շատ վնասուեր են հեղեղներէ: Պերզամայի գաշտը իրական լճի մը կերպարանքն առեր է: Իզմիրէ երկարող երկաթուղիները ծանրապէս վնասուեր են: Գառապայի երկաթուղւոյն վրայ Սումայի մօտ կառուցուած կամուրջը գրեթէ ամբողջովին կործաներ է:

— Սէլանիկի ծովեզերքը հող եւ շէնք ունեցողներէն ոմանք Հանրօգուտ շինութեանց նախարարութեան աղերսագիր մատուցած եւ խնդրած են որ նոր քարափներու շինութեան առթիւ պաշտպանուի իրենց իրաւունքը, որով հիմա ծովեզրին հետ հաղորդակցութիւն ունին: Եթէ այս կարելի չէ, դրամական հատուցում ըլլայ իրենց հողերուն կամ շէնքերուն այն վնասին փոխարէն որուն պատճառ կ'ըլլան ասոնց եւ ծովուն միջեւ շինուած քարափները եւ մթերանոցները: Կ'ըսեն թէ այս դիմումը կ'ընեն անոր համար որ անցեալ տարիներու մէջ երբ անդային կառավարութիւնը այժմու քարափները շինեց, ծովեզրեայ գետիններու եւ շէնքերու տէրերէն խոշոր գումարներ առնուեցան սա որոշ խոստումով թէ ծովեզրին հետ իրենց հաղորդակցութեան իրաւունքը պիտի պահպանուի եւ առով իրենց ստացուածքին արժէքը պիտի աւելնայ:

— Չորեքշաբթի գիշեր արքունի թնդանօթարանի գանձապետի օգնական Ահմէտ էֆ. դանակով ծանրապէս վիրաւորեց ինքզինքը: Ըստ իր խօսքին, անձնասպանութեան այս փորձն ըրեր է անոր համար որ դրամակալէն ստակ առեր է եւ բռնուելու երկրեզէն յուսահատեր ու ձանձրացեր է իր կեանքէն: Հիմա կը դարմանուի կիւմիւլչուի զինուորական հիւանդանոցին մէջ:

ԳՐԱՄԱԿԱՆ
Փետրուար 8/20, 1897

Գանձուիտէ	20 17		
Բուժելի Երկաթուղի	92		
Թահվիլութ 0 մասնէյէ	70 15		
ԳՐԱՄ. Օսմ. ոսկի 100է			
Մէճիտիյէ	108 22	Ռուսիայ բու	90
Մէթալիք	96 10	Նաբուէն	87 27
Պէշիք	103	Գրեմից	54 7
Ալթըլէք	103 10	Անդ. ոսկի	110 4
Մանր արծաթ	103 10	Մանէթ թղթ.	8 53

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊՈ ՊՅՅԱՅԱՆ
Ճիւղանցար Երզնայի, Ամերիկացի Խան